ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. **Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հետ կապված աշխատանքներ, մասնավորապես.**

- Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի 2-ից 6-րդ փուլերի աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով մշակել եմ համապատասխան իրավական ակտերի հիմնավորումներ՝ ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները պետական բյուջեի միջոցներով ապահովելու նպատակով:

- Իրականացրել եմ շահագրգիռ կողմերի հետ նախնական քննարկումներ և համաձայնեցրել եմ ծառայությունների մատուցման արդյունքների ժամանակացույցը:

- ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 639-Ն որոշմամբ պետական բյուջեից համապատասխան միջոցների հատկացումից հետո աջակցել եմ Ծառայությունների մատուցման պայմանագրի կազմման գործընթացին, այդ թվում՝ պատրաստել եմ տեխնիկական բնութագիրը հայերեն լեզվով:

- Համագործակցել եմ «Ամերիա» ՓԲԸ-ի և կոնսորցիումի կազմում ընդգրկված՝ ծառայություններ մատուցող թիմի հետ՝ աշխատանքների անխափան ընթացքի ապահովման և շահակից կողմերի հետ տեղեկատվության փոխանակման և գործողությունների համակարգման նպատակով:

2. **«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի կիրարկումն ապահովող աշխատանքներ, մասնավորապես.**

- Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության թիմի հետ համագործակցությամբ՝ համակարգել եմ աշխատանքները՝ ապահովելու բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության 2025 թվականի 1-ին եռամսյակի հայտերի առցանց ներկայացման գործընթացը: Մասնավորապես՝ մասնակցել եմ բիզնես գործընթացի նախագծման աշխատանքներին, համակարգել և մասնակցել եմ Ծառայությունների ազգային հարթակում և աջակցության հայտերի ներկայացման համապատասխան էջերում հրապարակվող տեղեկատվության բովանդակության մշակմանը:

- Համակարգել եմ հայտերի ռեգիստրի ձևավորման և ամենօրյա թարմացման, հայտերի վարման, ստացված հայտերի առաջնային ստուգման աշխատանքները, կատարել եմ վիճակագրական վերլուծություններ, մշակել եմ գործընթացի վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր:

- Ապահովել եմ համագործակցությունը Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության թիմի, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) պատասխանատուների հետ՝ նպատակ ունենալով 2025 թվականի 2-րդ եռամսյակից սկսած ներդնել ինքնաշխատ էլեկտրոնային համակարգ, որը կիրականացնի հայտերի ուսումնասիրությունը և պետական աջակցության տրամադրվելիք չափի հաշվարկը: Տրվել են համապատասխան տեխնիկական առաջադրանքներ և մեկնարկել են համակարգի մշակման աշխատանքները:

3. **Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների (R&D) աշխատանքները որպես այդպիսին որակելու աշխատանքների գործընթացին աջակցություն.**

- Կատարել եմ շահագրգիռ մարմինների, մասնավորապես, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ համագործակցության ապահովման, R&D աշխատանքները որպես այդպիսին որակելու 2025թ. 1-ին եռամսյակի հայտերի ընդունման գործընթացի վերաբերյալ շահառուներին համապատասխան տեղեկատվության տրամադրման և այլ աջակցող աշխատանքներ:

4. **Համագործակցություն ոլորտի շահառու ասոցիացիաների և կազմակերպությունների հետ.**

- Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել եմ ոլորտի շահառու ասոցիացիաների և կազմակերպությունների հետ մի շարք առերես և առցանց հանդիպումների և քննարկումների:

- Հանդիպումների ընթացքում շահառուներին ներկայացրել եմ «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով, ինչպես նաև Հարկային օրենսգրքով բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող պետական աջակցության և հարկային արտոնությունների կարգավորումները, R&D աշխատանքները որպես այդպիսին որակման դեպքում կիրառվող հարկային արտոնությունների տրամադրման ընթացակարգերը:

5. Այլ աշխատանքներ

- Հավաքագրել, մշակել և նախարարության աշխատակիցներին տրամադրել եմ նրանց կողմից պահանջված տեղեկատվությունը:

- Պատասխանել եմ այլ պետական մարմիններից ստացված պաշտոնական գրություններին:

- Պատասխանել եմ ոլորտի կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ստացված գրավոր հարցումներին և դիմումներին:

- Պատասխանել եմ շահառու կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված հեռախոսազանգերին՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն:

- Կատարել եմ մի շարք այլ ընթացիկ աշխատանքներ:

ԲՏ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ _____ ԼՈՒՍԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ստորագրություն

«27» հունիս 2025թ.

Հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները գնահատում եմ « գերազանց »

_____ ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ
անմիջական ղեկավարի ստորագրություն

«27» հունիս 2025թ.